

## **«Երևանի Զերմակելեկդրակենփրոն» փակ բաժնեփիրական ընկերության կողմից բնական գազի ներկրման լիցենզիայի**

### **Պայմանները**

**(Լիցենզիա №0318, դրված Հայաստանի Հանրապետության  
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009  
թվականի մայիսի 27-ի N240Ա որոշմամբ)**

#### **1. Սահմանումներ**

1. Լիցենզիայի պայմաններում օգտագործված որոշ հասկացություններ սահմանվում են հետևյալ կերպ.

**Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.**

**Լիցենզիա՝** Հանձնաժողովի կողմից «Երևանի Զերմակելեկդրակենփրոն» փակ բաժնեփիրական ընկերությանը դրված փաստաթուղթ, որը հավաքում է վերջինիս իրավունքը և պարփականությունը սույն լիցենզիայով սահմանված պայմաններով Հայաստանի Հանրապետություն բնական գազի ներկրման գործունեություն իրականացնելու իրավունք.

**Լիցենզավորված անձ՝ «Երևանի Զերմակելեկդրակենփրոն» փակ բաժնեփիրական ընկերություն.**

**Ներկրող՝** Հայաստանի Հանրապետություն բնական գազի ներկրման գործունեություն իրականացնելու լիցենզիա սպացած իրավաբանական անձ.

**Փոխադրող՝** բնական գազի փոխադրման լիցենզիա սպացած իրավաբանական անձ.

**Բնական գազի փոխադրման ցանց կամ Փոխադրման ցանց՝** բնական գազի մայրուղային գազամուղների, գազաբաշխիչ կայանների, գազի պահեստարանների, կոմպրեսորային կայանների, դրանց հուսալի և անվիրանգ շահագործման համար անհրաժեշտ սարքավորումների ու օպերատիվ կառավարման համալիրների (ներառյալ՝ կենտրոնական կարգավարական ծառայությունը) կազմակերպական, գելինիկական և /կամ/ գնդեսական կապերով ու աշխարհային ռեժիմներով միավորված համակարգ, որի միջոցով իրականացվում է բնական գազի փոխադրումը (գրեղափոխումը) ներկրման, արդադրության (արդյունահանուման) լիցենզիա ունեցող անձանցից բնական գազի արդարանման, բաշխման լիցենզիա ունեցող անձանց, իսկ առանձին դեպքերում՝ անմիջապես սպառողներին, և որի սահմանազարման կետերն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական սահմանի այն կերպով, որը կարգադրում է բնական գազի փոխադրումը (գրեղափոխումը) ներկրման, արդադրության (արդյունահանուման) լիցենզիա ունեցող անձանցից բնական գազի արդարանման, բաշխման լիցենզիա ունեցող անձանց, իսկ առանձին դեպքերում՝ անմիջապես սպառողներին,

2) Փոխադրողի և բաշխողի գազաբարների միացման հանգույցները.

**Ֆորս մաժոր՝** արդակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք սպեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չահմանափակվելով դրանցով) բնական աղեգները, բնության ուժերի արդատվող ուժեղ դրսնորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտիքահողմերը, նաև սաքուաժային գործողություններ, ահարեւէցություններ, պատերազմներ, ապարամբություններ, հասարակական անկարգություններ, գործադրություններ, որոնք խոչնդոքում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա սպանճանած ցանկացած պարտավորության կարարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

## 2.Լիցենզիայի գործողության ժամկետը

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2009 թվականի մայիսի 27-ից:
3. Լիցենզիայի գործողության ժամկետն է մինչև 2010 թվականի մայիսի 27-ը:

## 3.Լիցենզավորված գործունեության Էռությունը կազմող գործառույթները

4. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին պրվում է Լիցենզիայի պայմաններին համապարախան Իրանի Իսլամական Հանրապետությունից բնական զազ ներկրելու իրավունք:
5. Ներկրվող բնական զազի ծավալները սահմանվում են Լիցենզիայի անբաժանելի մասը կազմող՝ «Երևանի Զերմակելեկիրակենֆրոն» փակ բաժնեփիրական ընկերության և Իրանական զազ արդահանող Ազգային ընկերության 2004 թվականին կնքված բնական զազի ներկրման պայմանագրի համապարախան (Հավելված)` հետևյալ չափաքանակով.

Առաքման գրանցելու թիվ	Պայմանագրով նախագրեսված գործեկան քանակը, միջիարդ խորանարդ մերք զազ
2009-2010	1,1

6. Լիցենզավորված անձն իրավունք չունի լիցենզավորված գործունեության Էռությունը կազմող գործառույթները պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օգարել, զիշել կամ փոխանցել մեկ այլ անձի՝ առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու:

## 4.Լիցենզավորված գործունեության պայմանները

7. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունը պետք է իրականացնի փնտեսական արդյունավետության սկզբունքներին, գործող նորմափիվ-իրավական ակտերին համապարախան:
8. Լիցենզավորված անձը չի կարող լիցենզիան օգտագործման դաշտում գործադրել այլ անձանց՝ առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու և Լիցենզիայում

համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կադրելու: Լիցենզայի գործողությունը չի փարածվում Լիցենզավորված անձի հետ համապետ, այդ թվում՝ համապետ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ իմանադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

9. Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնեպետ, փայապետ կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:
10. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնեպետը կամ փայապերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերել Լիցենզավորված անձի կամ մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 տոկոս և ավելի բաժնեպոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 տոկոս և ավելի բաժնեպոմսեր:
11. Լիցենզավորված անձի կողմից բնական գագի փոխադրման ծառայություն իրականացնող անձանց հետ կնքվող պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերին:
12. Լիցենզավորված անձի և Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող այլ անձանց միջև կնքվող պայմանագրերը պետք է գրանցվեն Հանձնաժողովում:
13. Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին ու ձևերին համապատասխան, Հանձնաժողովը է ներկայացնում դեղեկարգություն և հաշվեդրվություններ՝
  - ա) բանկերում ունեցած հաշիվների մասին,
  - բ) անցած ժամանակաշրջանի գործունեության մասին,
  - գ) հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի ֆինանսավորեսական ցուցանիշների կանխագրեսումների մասին,
  - դ) երկարաժամկետ և կարճաժամկետ վարկային ծրագրերի մասին՝ համապատասխան իմանավորումներով:
14. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվեդրվությունը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին:
15. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվեդրվությունը պետք է առանձնացված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող գործունեության այլ գործակների հաշվապահական հաշվառումից և հաշվեդրվությունից:
16. Լիցենզավորված անձը պարբակոր է յուրաքանչյուր փարի՝ մինչև ապրիլի 30-ը, հանրապետական մամուլում հրապարակել նախորդ փարլա իր գործունեության ֆինանսավորեսական հաշվեդրվությունը՝ համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված ձևերի: Եթե Լիցենզիայի գործողության ժամկետը պակաս է մեկ փարուց, ապա նշված հաշվեդրվությունը պետք է հրապարակվի Լիցենզիայի ժամկետը լրանդրուց հետո չորս ամսվա ընթացքում: Դրապարակված հաշվեդրվությունները չպետք է պարունակեն պետրական և ծառայողական գաղփնիքներ:
17. Լիցենզավորված անձը պարբակոր է Հանձնաժողովի պահանջով իրականացնել իր ֆինանսավորեսական գործունեության անկախ առողիք, այդ թվում Հանձնաժողովի կողմից առաջադրված առանձին խնդիրների վերաբերյալ:

18. Բնական գազի վաճառքի, ինչպես նաև գազի փոխադրման և բաշխման ծառայությունների սակագները սահմանում է Հանձնաժողովը: Սակագները վերանայելիս Հանձնաժողովի կողմից սահմանված սակագներից ցածր սակագներ կիրառելու հետևանքով Լիցենզավորված անձի հնարավոր վնասները հաշվի չեն առնվում:
19. Լիցենզիայի գործողության ընթացքում Լիցենզավորված անձն իր նախաձեռնությամբ, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին ու ծերին համապարախան, կարող է հայր ներկայացնել իր կողմից վաճառվող գազի սակագնի վերանայման վերաբերյալ:
20. Հանձնաժողովը բնական գազի վաճառքի սակագների մեջ հաշվի է առնում միայն այն ծախսերը, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են Լիցենզավորված գործունեությունն իրականացնելու համար:
21. Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ և իր կողմից սահմանված ընթացակարգով կարող է վերանայել Լիցենզավորված անձի կողմից վաճառվող գազի սակագինը՝ հիմնվելով Լիցենզավորված անձի ֆինանսավորեսական հաշվեգությունների և (կամ) անկախ առողջիկի արդյունքների վրա:
22. Լիցենզավորված անձը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պարագայի առաջարկություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության հաշվեգության և այլ գեղեկարգության հավասարության համար:
23. Լիցենզավորված անձը պարբավոր է անմիջապես հայդնել Հանձնաժողովին այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել սույն Լիցենզիայի պայմանների խախտումների:
24. Լիցենզավորված անձը պարբավոր է կարգարել Փոխադրող համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգները և կարգադրությունները՝ համաձայն կնքված պայմանագրի:
25. Լիցենզավորված անձը պարբավոր է Հանձնաժողով և Փոխադրող համակարգի օպերատորին անհապաղ հայդնել բնական գազի ներկրման նախագիծների ժամանելի փոփոխությունների մասին:
26. Եթե Հայաստանի Հանրապետություն գագ ներկրելու Լիցենզիա սպացել են մեկից ավելի անձինք, ապա յուրաքանչյուրի փաստացի մասնաբաժինը Հայաստանի Հանրապետության սահմանում որոշվում է նրանց միջև կնքված հարուկ պայմանագրով ամրագրված սկզբունքով: Ներկրողների միջև գազի մասնաբաժինների որոշման վերաբերյալ դաշտական պարագայի առաջարկությունները սահմանված կարգով քննարկվում են Հանձնաժողովում:

## 5. Լիցենզավորված գործունեության վերահսկում

27. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումը իրականացնում է Հանձնաժողովը:
28. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպարակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազար մուգքի իրավունք Լիցենզավորված անձի դաշտում: Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:
29. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի դաշտում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

## **6.Տույժեր**

30. Լիցենզիայի պայմանները չկափարելու, ոչ պարփառ կափարելու կամ խախտելու դեպքում, դեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հանձնաժողովը իրավասու է կիրառել հետևյալ գույժերը.
- ա) նախազգուշացում,  
բ) սակագների նվազեցում,  
ց) Լիցենզիայի կասեցում,  
դ) Լիցենզիայից գրկում:

Նշված գույժերի կիրառման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

31. Լիցենզավորված անձին Լիցենզիայից գրկելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը դեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
32. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Մինչև Լիցենզիայի կասեցման կամ գրկման մասին Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում կայացնելը, Լիցենզավորված անձը պարփակոր է շարունակել իրականացնել գործունեությունը՝ դեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածով և համաձայն Լիցենզիայի պայմանների:
33. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պարասխանափության՝ սույն Լիցենզիայի 6.1 կետով՝ սահմանված գույժերով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորային հանգամանքների հետևանք են:

## **7.Լիցենզիայի պայմանների փոփոխություն, Լիցենզիայի կրկնօրինակի գրամադրում**

34. Լիցենզիայում փոփոխություններ կարարվում են Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:
35. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվան կամ գրնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարփակոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ 15-օրյա ժամկետում հայդ ներկայացնել Հանձնաժողով Լիցենզիայի վերածնակերպման համար՝ կցելով նշված գույժեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթեր:
36. Լիցենզավորված անձը՝ 15-օրյա ժամկետում ծանուցագրով գրեթեկացնում է Հանձնաժողովին իր իրավաբանական հասցեում, հիմնադիր փաստաթղթերում և բանկային հաշվեհամարներում գրեղի ունեցած փոփոխությունների մասին:
37. Լիցենզավորված անձի բաժնեփերերի (հիմնադիրների) փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարփակոր է դիմել Հանձնաժողով՝ Լիցենզիայի պայմաններում անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կարարելու համար:
38. Լիցենզիայի կորսիքի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման դեպքում Լիցենզավորված անձը պարփակոր է հայդ ներկայացնել Հանձնաժողով: Լիցենզիայի կրկնօրինակի ստացման և (կամ) ժամկետի երկարաձգման ընթացակարգերը կարգավորվում են Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտով:

## **8.Ծանուցում**

39. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայրերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները պեսք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պարվիրված նամակով: Յանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ կհամարվի սրացման պահից կամ, եթե այն չի սրացվել հասցեափիրոց մեղքով՝ ներկայացման պահից: